դարձ կատարվեց Հայ Առաքելական և Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցիների միջև առկա ջերմ հարաբերություններին և սերտ համագործակցությանը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ «ՇՈՒՇԻ» ՊԱՐԱԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Հուլիսի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նաև ԱՄՆ Հայոց Արևելյան թեմից Հայաստան ժամանած Նյու Յորքի Սուրբ Վարդան առաջնորդանիստ եկեղեցու «Շուշի» պարախմբի անդամներին՝ գեղարվեստական ղեկավար Սեդա Պասկալյանի ուղեկցությամբ:

Վեհարանի հարկից ներս ողջունելով պարախմբի անդամներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բերեց պարախմբի անդամ պատանիներին ու երիտասարդներին և իր գնահատանքը հայտնեց գեղարվեստական ղեկավարին և պարուսույցներին՝ երիտասարդներին պարարվեստին և ազգային արժեքներին հաղորդ դարձնելու համար: Վեհափառ Հայրապետը հորդորեց երիտասարդներին փարված մնալ ազգային արժեքներին, սիրել իրենց Հայրենիքը և Եկեղեցին, հավատարիմ մնալ իրենց ազգային ինքնությանը և մշակույթին:

Նորին Սրբությունը մաղթեց պարախմբի անդամներին Աստծո օրհնությամբ նորանոր հաջողություններ, որպեսզի իրենց արվեստով շարունակեն ուրախություն և երջանկություն պարգևել շատ ու շատ հայորդիների սրտերին ինչպես ԱՄՆ-ում և Հայրենիքում, այնպես և Հայրենիքի սահմաններից դուրս՝ հռչակ բերելով մեր ազգին:

Վերջում Հայոց Հովվապետը պատասխանեց երիտասարդների հարցերին՝ առաջիկային՝ սեպտեմբեր 28-ին կատարվելիք Մյուռոնօրհնության արարողության, Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի, Հայրենիքում իրականացվող եկեղեցաշինության և ազգային-եկեղեցական կյանքին առնչվող այլ խնդիրների վերաբերյալ:

Հանդիպման ընթացքում որոշվեց, որ «Շուշի» պարախումբը հանդես կգա համերգային ծրագրով նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Ս. Տրդատի բաց խորանի առջևի հարթակում, հուլիսի 9-ին ժամը 20.00-ին:

Հանդիպմանը ներկա էր Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Հուլիսի 9-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Արգենտինայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Լեոպոլդո Ալֆրեդո Բրավոյին: